

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպէսով:

Թիֆլիսում գրվում են միմյաին խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէսով.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԱՐԱՐ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2

ՍՕՅԻԱԼ ԲԱՎՈՅՆԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ

Թաղման տարեգրածի առիթով, որ բոլորել է օգոստոսի 26-ին, Մոսկու և Գէորգ Եկեղեցում կը լինի պատարագ և հոգեհանգիստ. այդ մասին հանդուցեալի որդեքը յայտնում են իրանց բարեկամներին և ծանօթներին:

Ջինուորական բժշկական ձեռնարանի ուսանող Կարապետ Աղաջանեանը յայտնում է իր թանգագին հօր՝

ՍԱՐԳԻՍ ԱՒԱԳ ՔԱՆԱՆԱՅ ԱՂԱՋԱՆԵԱՆԻ

ձխականներին, ընկերներին, աշակերտներին, ազգականներին և բարեկամներին, որ կիրակի, սեպտեմբերի 3-ին, առաւօտեան ժամի 11-ին Ջորաշէնի Աւետեաց եկեղեցում կը կատարվի հոգեհանգիստ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է ընթացք առաւ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձազանքներ. Նամակ Նոր-Բայազէտի. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Չինական գործերը. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՎԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Խոշոր մերկացումներ:

ՊԵՏԻ Է ԸՆԹԱՑԳ ՏԱՂ

Անցեալ ձմեռ մենք նուիրեցինք մի շարք յօդուածներ մեր երկրի շերտաւազական հարցերին: Արձազանք հանդիսանալով այն կարիքներին, որ ունի մեր երկրի շերտաւազականութիւնը, մենք առաջարկեցինք մի քանի միջոցներ՝ բարեփոխելու արդիւնաւորութեան այդ ծիւղը մեր երկրում: Կարեւոր հարցերից մէկն էր շերտաւազականութեան սերմ մատակարարելը ազգաբնակչութեանը: Թէ երկրագործութեան միջնորդութիւնը և թէ կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը զբաղվեցին շերտաւազական հարցերի քննութեամբ: Սակայն, զրգազարդ, վերջնական որոշ եզրակացութեան չեկան, իսկ շուտով մօտենում է շերտաւազական նոր շրջանը, որ արդէն լուրջ մտաւորութիւն է պատճառում մեր շերտաւազականներին և սերմնահատներին: „Մշակի“ երէկվայ համարում տպւած

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

անկարգութիւնները համարեալ բացառապէս աշխարհականներն էին քննադատում, և հոգեւորականները նրանցից օժիք աղատելու համար առում էին, թէ այդ մարդիկ անաստուածներ են, կաշաւած դաւաճաններ և այլն: Բայց ահա մեր հոգեւորականութեան միջից էլ դուրս եկաւ մի անհատ, որ յանցանք է համարում լուրը, որ հաւատացած է թէ բարեկարգութիւնը անխնայ մերկացումների, արգելքների և այլնի մէջ է, ուստի և հրապարակ է հանում իր փառքերն ու դատողութիւնները: Ինչպէս գիտե՞ք, այդ անհատը Արիստակէս Եկեղեցականն է, միակ հոգեւորականը մեր մէջ, որ ծանաչելով իր պարտաւորութիւնները, չէ մոռնում և իր իրաւունքները, որ ոսպի ապուրի համար առաջնութիւն ծախել չը գիտէ և պարզեւորելու իշխանութեան հրապարակներին չէ զոհում իր բողոքաւոր ձայնը: Ինչպէս են վերաբերվում մեր հոգեւորականները իրանց այդ քննադատող և պահանջող կարգակցին:

Դուք, ի հարկէ, յիշում էք թէ ինչ աղմուկ բարձրացրեց Արիստակէս Եկեղեցականը «Ամուսնական խնդիրներ» աշխատութիւնը, որ հրատարակվեց 1891 թվին: Մի լուրջ և փաստալից ուսումնասիրութիւն էր դա, որ հիմնաւոր, խնայելի առաջարկութիւններ էր տալիս ամուսնական հարցերը կարգաւորելու համար, հարցեր, որոնք ահազին դժգոհութիւններ են յարուցանում ժամանակակից հասարակութեան մէջ և ստիպողաբար լուծում են պահանջներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

X

Թող թող տրվի ինձ խօսել այս անգամ մի հարցի մասին, որ ինձ է վերաբերում, — pro domo sua, ինչպէս ասում էին հռոմայեցիները:

Ներկու պարոններ շատ դժգոհ են մնացել իմ մատնագրական ակնարկներից — պ. Կ. Ենովք Տէր-Արիստակէսեան և Նրուանդ Շահադիդ:

Պ. Ենովք Տէր-Արիստակէսեանի գրքովը («Պաղթականի մը համառօտ կարծիքներ») քննադատելով, և ասել էի, թէ հեղինակը անգրագէտ է, ասել է և ծանօթ չէ այստեղի պայմաններին, սակայն չը նայելով այդ բոլորին, խորհուրդներ է տալիս աջ ու ձախ, — մի բան, որ իմ կարծիքով, ամբարտաւանութիւն է:

Պ. Ն. Տէր-Արիստակէսեան իր նամակով, որ տպւում է «Մշակի» այս համարում, ուզում է հերքել, բայց իսկապէս հաստատում է իմ ասածները:

Նա խոստովանում է, որ ինքը անգրագէտ է. մոռնում է խոստովանել, որ այդ դէպքում իր պարտականութիւնն էր տալ գրուածը ուղղելու մի գրագէտ մարդու. խոհեմաբար լուծ է իր տգիտութեան մասին և պնդում է, թէ «Ենովք Տէր-Արիստակէսեանը խորհուրդներ» վերին աստիճանի ամբարտաւան լինելի և «ուսումնական ամենատարրական պայմանների» հակառակ լինելին, այն ասին կարելի չէր երբեք հրատարակել և այլն, որով ապացուցանում է, ինչ որ պահանջվում էր ապացուցանել, այսինքն, որ ինքը ազատ է և «ամենատարրական տեղեկութիւններ չունի այն պայմանների մասին, որոնց մէջ ապրում են ուսուցիչները»: Տգէտ լինելով, նա չէ հասկացել մեր խօսքերի միտքը, որովհետեւ, եթէ հասկանար, ինչու պէտք է պնդել, թէ, եթէ ինքը մեր ասած պայմանների հետ ծանօթ չը լինէր, իրան թող չէին տալ տպել գրքովը: Իսկ որ անծանօթ է մեր կեանքի պայմաններին, դրան նոր ապացուցանել է տալով, կրկնելով այն միտքը, թէ ուսուցիչները կարող են, «անհնազան» են գործել Թիւրքիայում այնպէս, ինչպէս օտարազգիները, և պնդելով, թէ ուսուցիչները իրան ամբարտաւան գրուածքները թող չէ տալիս տպելու, որովհետեւ «օրէնքը չի քաջաբեր ամբարտաւանութիւնը»: Սակայն և այնքան անբարեխիղճ է նա, որ այդ պատճառաբանական փաստից օգտվելու իրաւունքը

իրան է միայն վերապահում, ասելով թէ իմ յօդուածն է իսկապէս ամբարտաւան, թէեւ չէ որ այդ յօդուածն էլ թող է տրված ցէնզուրայից, որ «չի քաջաբեր ամբարտաւանութիւնը»:

Վերջացնելով մեր խօսքը պ. Ն. Տէր-Արիստակէսեանի մասին, մենք մեզ պարտական ենք համարում խոստովանել, որ մեր մատնագրական ակնարկում մի սխալ ենք արել. — մոռացել ենք արտասուել նրա գրքովի վերջին բնութագրողը: «Ընթերցողներին. Շնորհակալութեամբ կընդունեն կարծիքներին հակառակ կամ համաձայն իրենց կարծիքները հետեւեալ հասցեով. Երեւան, Ենովք Տէր-Արիստակէսեան»:

Աւելի տարօրինակ պարոն է պ. Նրուանդ Շահադիդ: «Տարազի» մէջ ապրիլից սկսած մինչեւ օգոստոս նա տպւում էր մի անաղին յօդուածի պատասխան մի քանի մատնագրական ակնարկներին, որոնք տպւած են եղել սրանից մի քանի տարի առաջ իր «Միջալէլ Նալանդեանցի կենսագրութիւնը» գրքի մասին:

Որքան ևս դիտեմ, միայն մեր գրականութեան մէջ կարելի է պատահել այդպիսի հերքումներ: Օտար գրականութիւնների մէջ ընդունված է պատասխանել միայն մեծ քննադատական յօդուածներին, որոնք կարող են երկար ժամանակ ընթերցանութեան նւթ մնալ և որոնք սկզբունքի հարցեր են չափաւոր մենք, հայերս իրաւունք ենք համարում տալ տող գրվածքին պատասխանել տարիներ անցնելուց յետոյ: Ինչու: Որովհետեւ ամեն մի հայ «laesio majestatis» («Մեծութեան վիրաւորանք») է համարում ամենաթեթեւ ակնարկը թէ իր գրուածքը կլանակալան չէ, իսկ աղաքի վիրաւորանք չէ կարելի մոռանալ նոյն իսկ տարիների ընթացքում:

Այդ էլ ոչինչ: Բայց ինչ է պատասխանում մեզ պ. Շահադիդ երեք տարի «չլա» մտնելուց յետոյ: Այն, որ մենք, եթէ ուզում ենք գրքեր քննադատել, պէտք է լինենք մի Լեստիգ (որի մասին, ի դէպ ասել, նա գաղափար ունի միայն Գալիլիայի դասագրքից, ինչպէս այդ երեւում է իր գրած «անօթութիւնից») կամ ամենաքիչը մի Բելինսկի: Թէ ինչու պ. Շահադիդի գրքը քննադատելու համար պէտք է Լեստիգ լինել, որին մեր ժամանակակից ամենահռչակաւոր քննադատ Բրանդէս համարում է «ամենամեծ քննադատական խելք, որի նմանը դեռ չէ եղել» — այդ պ. Շահադիդի գաղտնիքն է, որի բանա-

խոսքի մասին. ինչպէս կարելի էր ծաղուտ հանել այն դէպքում, երբ պաշտօնով բարձր կղեր զոհում էր, որ տգիտութիւնը, ընդհակառակն, շատ ցանկալի է գիւղական քահանաների համար...

Այսպէս էր հոգեւորական դասի վերաբերմունքը դէպի «Ամուսնական խնդիրներ» և «Ո՞վ հաւատաց»-ի հեղինակը: Սակայն պէտք է աւելացնել, որ վայնասունը միայն Արիստակէս Եկեղեցականի մերկացումները չէին պատճառում Պակաս դեր չէր կատարում և նախանք, չկամութիւնը, փոող կաղձակեցողութիւններին յատուկ մի կարգ է, որ նրա պաշտօնանկը գոռոզ, արհամարհող են լինում և աշխատում են կործանել ամեն մի բարեւարտակ գործ լով այն պատճառով, որ նրա սկողը նախանք է գրգռում: Հաստատ իրողութիւն է, որ 1870 թվականի պատերազմի ժամանակ Նալոյթօն III-ի զօրավարները ասուկայի վարդ էին ուտում ժամանաւոր այն պատճառով, որ միմեանց դէմ անձնական ստոր թշնամութիւններ ունէին և միմեանց չէին օգնում: Այսպէս, Բաղէն Բաղէն օգնական գործ չուղարկեց իրանցից քիչ հետո. պատերազմ սկսած մի գեներալին, որովհետեւ չէր ուզում, որ վերջինս յաղթող հանդիսանայ և մարշալի աստիճանին հասնէ: Ու հետեւանք այն եղաւ, որ ֆրանսիական զօրքը ստակալի պարտութիւն կրեց, անասելի թշուառութիւնների մատնելով հայրենիքը:

Այս խոշոր օրինակի փոքրիկ նմանութիւն

450

հերկ
նեղու (օրի
հոգի
կապ
բայ
մայ
սյւլ
յ ա լ
կ տ
ե ս
Կօջ
լուռ
յիրե
իշխ
նեք
սը
էս
այդ
նախ
եկե
սը
եւ
թոյ
մաւ
գեց
մաւ
ան
զոր
մից
եկե
այն
ժող
տա
իմը
կաւ
որ
մո
բը,

ն
տի
հիւ
հեր
տը
ան
հա
շեց
նե
քա
ինչ
ար
սկ

ծա
գո

Լեր
րե
տա
տա
վա
հր
լի
հն
թ
կա
մի
այ
կա
մի
ցա
թ
գի
Շի
ըն
շա
այ
ի
րե
դի
ն
ճր
նե
կը

2

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27.